DOI: 10.46991/educ-21st-century.v4.i2.223 **https://orcid.org/0000-0001-5420-463X**

UNDERSTANDING OF RELIGIOUS AND ETHICAL UPBRINGING IN THE WORKS OF EAST ARMENIAN PEDAGOGS (1840-1880)

Ghevondyan Mane
PhD student
Yerevan State University
Republican pedagogical-psychological center, Armenia
manegevondyan@gmail.com

Summary

In the second half of the 19th century, there were many intellectuals, such as A. Bahatryan, I. Harutyunyan, S. Mandinyan, St. Fr. Mandinyan, Khoren Narpe, P. Shanshyan who received pedagogic higher education in advanced European institutions. Secular and spiritual educators distinguished four forms of education: mental, physical, labor, moral. Here, we have analyzed what concepts Armenian pedagogues have expressed under moral education, whether moral education is connected with religious education, what traditions the aforementioned Armenian pedagogues have followed. The aim of the research is to analyze the views of 19th century Eastern Armenian educators regarding moral education. Find out which perception has been dominant in the field of public education. There are many sources related to the history of the Armenian school and pedagogical thought, but until now no in-depth studies have been conducted on the issue that interests us, as a result of which the history and methodology of moral education has remained uncertain.

Keywords: Pedagogue, education, East Armenian school, religious and ethical upbringing, the image and likeness of God.

ВЗГЛЯДЫ НА РЕЛИГИОЗНО-НРАВСТВЕННОЕ ВОСПИТАНИЕ В РАБОТАХ ВОСТОЧНОАРМЯНСКИХ ПЕДАГОГОВ (1840-1880)

Гевондян Мане
Аспирант
Ереванский государственный университет
Республиканский педагогический психологический центр, Армения
manegevondyan@gmail.com

Аннотация

Во второй половине XIX века интеллектуалы, такие как А. Багатрян, И. Арутюнян, С. Мандинян, Ст. Мандинян, Хорен Нарпе, П. Шаншян, получили педагогическое высшее образование в известных европейских учебных заведениях. Светские и духовные просветители различали четыре формы воспитания: умственную, физическую, трудовую, нравственную. В данной статье проанализированы взгляды, высказаннаые армянскими педагогами в отношении нравственного воспитания, рассмотрено, связано ли нравственное воспитание с религиозным воспитанием, каким традициям следовали вышеупомянутые армянские педагоги. Цель исследования – подвергнуть тщательному разбору взгляды восточно армянских просветителей XIX века относительно нравственного воспитания, выяснить, какое восприятие было доминирующим в сфере народного образования. Существует множество источников, связанных с историей армянской школы и педагогической мысли, но до сих пор отсутствуют существенные исследования по интересующему нас вопросу, в результате чего история и методика нравственного воспитания остается неопределенной и нерешенной.

Ключевые слова: педагог, образование, восточноармянская школа, религиозно-нравственное воспитание, образ и подобие Божии.

ԿՐՈՆԱԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ (1840-1880)

Ղևոնդյան Մանե
ասպիրանտ,
Երևանի պետական համալսարան
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Հայաստան
manegevondyan@gmail.com

XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում մանկավարժական գործունեություն են ծավալել եվրոպական բարձրագույն հաստատություններում մանկավարժական կրթություն ստացած անձինք, ինչպես՝ Ա. Բահաթրյանը, Ի. Հարությունյանը, Ս. Մանդինյանը, Ս. քին.Մանդինյան, Խորեն Նարպեն, Պ. Շանշյանը:

Աշխարհիկ ու հոգևոր մանկավարժները տարբերակում էին դաստիարակության չորս ձև՝ մտավոր, ֆիզիկական, աշխատանքային, բարոյական: Այստեղ վերլուծել ենք, թե բարոյական դաստիարակության ներքո հայ մանկավարժները ինչպիսի տեսակետներ են արտահայտել, արդյոք բարոյական դաստիարակությունը կապված է կրոնական դաստիարակության հետ, ինչպիսի ավանդույթների հետևորդ են եղել վերոնշյալ հայ մանկավարժները: Հետազոտության նպատակն է վերլուծել XIX դարի արևելահայ մանկավարժների տեսակետները *բարոյական դաստիարակության* վերաբերյալ, պարզել, թե որ ընկալումն է գերիշխող եղել հանրակրթության ոլորտում: Բազմաթիվ են հայ դպրոցի, մանկավարժական մտքի պատմությանն առնչվող աղբյուրները, սակայն մինչ օրս խորը ուսումնասիրություններ չեն կատարվել մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ, ինչի հետևանքով մեզանում անորոշ են մնացել բարոյական դաստիարակության պատմությունն ու մեթոդաբանությունը: Սույն հոդվածում ներկայացված դրույթները ավելի ծավալուն ներկայացվելու են հետագա մեր ուսումնասիրու-թյուններում:

Բանալի բառեր: Մանկավարժ, կրթություն, արևելահայ դպրոց, կրոնաբարոյական դաստիարակություն, Աստծո պատկեր և նմանություն:

Ներածություն: XIX դարի արևելահայ մանկավարժական միտքը գիտական ուղղություն է դառնում ռուսական ու եվրոպական համալսարաններում մանկավարժություն ու փիլիսոփայություն ուսումնասիրած մի շարք հայ աշխարհիկ և հոգևոր մանկավարժների ջանքերի շնորհիվ: Այդ գործում մեծ ավանդ են ունեցել Խ. Աբովյանը, Ս. Մանդինյանը, Ի. Հարությունյանը, Խորեն Նարպեն, Ա. Բահաթրյանը, Պ. Շանշյանը և ուրիշներ: Նրանք հանդես են եկել հայ դպրոցի կառավարման համակարգի, կրթության նպատակների, բովանդակության, ուսումնական ծրագրերի վերաբերյալ հրապարակումներով:

Արևելահայ մանկավարժ տեսաբանները, կրթությանն առնչվող տարատեսակ խնդիրներին զուգահեռ, մեծ ուշադրություն էին դարձնում դաստիարակության հարցերին: Քննվող ժամանակաշրջանում տարբերակվում էին դաստիարակության հետևյալ՝ մտավոր, աշխատանքային, ֆիզիկական, բարոյական տեսակները: Անկախ դարաշրջանից՝ դաստիարակության առաջին երեք ձևերի շուրջ եվրոպացի, ռուս, հայ մանկավարժ-փիլիսոփաները համակարծիք էին և հայտնում էին նմանատիպ գաղափարներ, սակայն *«բարոյական դաստիարակություն»* հասկացության վերաբերյալ տարակարծություններ առաջացան: Որոշ մանկավարժների կարծիքով նման դաստիարակությունը հիմնվում է քրիստոնեական արժեհամակարգի վրա: Նման գաղափարի ջատագովները դաստիարակության գործընթացը «կառուցում են» քրիստոնեությունից բխող սկզբունքների վրա: Դաստիարակության ելակետ են ընդունում մարդու Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված լինելու «բանաձևը», թերևս այդ պատճառով կիրառում են *կրոնական* կամ *կրոնաբարոյական դաստիարակության* գաղափարները:

Մյուսները կարծում են, որ նման դաստիարակության խնդիրներն են՝ երեխայի մեջ զարգացնել կամքը, սովորեցնել ազնվություն, անկեղծություն, առաքինություն, զբաղվել հանրօգուտ գործունեությամբ, ներդնել առաքինությունների համակարգը: Եթե առաջին խումբը *բարոյական դաստիարակության* հարցերի պատասխանները փնտրում էր Աստվածաշնչում, ապա երկրորդ խմբի հետևորդները չէին հստակեցնում, թե վերոնշյալ գաղափարական հիմքերը որտեղ է անհրաժեշտ գտնել:

Քննվող ժամանակաշրջանում *«բարոյական դաստիարակություն»* հասկացության ներքո արևելահայ կրթական համակարգ ուսումնասիրողները տալիս են երկու մեկնաբանություն՝ առաջին՝ երեխաներին համամարդկային արժեքներ՝ հայրենասիրություն, ընկերասիրություն, մարդասիրություն, ազնվություն սովորեցնել, երկրորդ՝ *բարոյական դաստիարակությունն* ընկալվել է որպես մեթոդ՝ երեխաներին խրախուսելու կամ պատժելու համար:

Արևելահայ աշխարհիկ ու հոգևոր մանկավարժներ Ա. Բահաթրյանը, Պ. Շանշյանը, Ի. Հարությունյանը, Ս. Մանդինյանը, Ս. քին Մանդինյանը, Խորեն Նարպեն գործածում են «*կրոնաբարոյական դաստիարակություն»* հասկացություն՝ հիմք ընդունելով քրիստոնեական արժեհամակարգը:

Հիմնախնդիր: Մեր ուսումնասիրության հիմնախնդիրն է արևելահայ մանկավարժների տեսակետների համեմատական վերլուծությամբ բացահայտել XIX դարի արևելահայ կրթական համակարգում *բարոյական դաստիարակության* ընկալումները:

Հետազոտության նպատակը: Մեր ուսումնասիրության նպատակն է վերլուծել XIX դարի արևելահայ մանկավարժների տեսակետները *բարոյական դաստիարակության* վերաբերյալ, պարզել, թե որ ընկալումն է գերիշխող եղել հանրակրթության ոլորտում:

Գիտական նորույթը: Արևելահայ դպրոցի, մանկավարժական մտքի պատմությանն առնչվող մենագրություններում ուսումնասիրողներն անդրադարձել են արևելահայ կրթական համակարգի առանձնահատկություններին, կրթության բովանդակությանը, հայ դպրոցների վիճակին, դիդակտիկ նյութերի կարևորությանը, համառոտ ներկայացրել են մտավոր, ֆիզիկական, աշխատանքային, բարոյական դաստիարակության վերաբերյալ մանրամասնություններ: Քննվող հարցերի ու խնդիրների լայնածավալ ուսումնասիրությունների պատճառով խորքային վերլուծություններ չեն կատարվել մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ:

Այստեղ վերլուծել ենք «*բարոյական, կրոնաբարոյական դաստիարակություն*» հասկացությունները, աշխարհիկ ու հոգևոր մանկավարժների տեսակետների համեմատությամբ պարզել՝ հանրակրթության մեջ նման դաստիարակության ինչպիսի ընկալություն է եղել, և ինչպիսի ավանդույթների հետևորդ են եղել երկու հոսանքների ներկայացուցիչները:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Մեզանում *կրոնաբարոյական դաստիարակության* խնդիրներին անդրադարձել են Պ. Հովնանյանցը, Վ. Հացունին, Ե. Քասունին: Նկատի ունենալով քննվող ժամանակաշրջանում հանրակրթության ոլորտում բարոյականության ու կրոնի անորոշ կապը՝ մինչ օրս մասնակիորեն են ուսումնասիրվել արևելահայ մանկավարժների՝ բարոյական դաստիարակության առնչվող տեսակետները Հ. Սանթրոսյանի, Գ. Ա. Նազիկյանի, Գ. Հ. Հարությունյանի, Վ. Երկանյանի, Ա. Գ. Դավթյանի, Ն. Հարությունյանի, Մ. Մուրադյանի, Ա. Շավարշյանի կողմից: Սույն հոդվածում առաջին անգամ ուսումնասիրվում են արևելահայ մանկավարժների տեսակետները *կրոնաբարոյական դաստիարակության* վերաբերյալ:

Հիմնական նյութի շարադրանք: XIX դարի երկրորդ կեսին արևելյան Հայաստանում տեղի են ունենում կրթական համակարգի բարեփոխումներ: Մշակվում են դպրոցական կանոնադրություններ, ուսումնական ծրագրեր, դասագրքեր: Արևելահայ մանկավարժական միտքը ձեռք է բերում գիտական ուղղություն՝ հանձինս աշխարհիկ ու հոգևոր մանկավարժ գործիչների, որոնք կրթություն էին ստացել եվրոպական մանկավարժական բարձրագույն հաստատություններում: Հաղորդակից լինելով եվրոպական կրթական-մշակութային կյանքին, որից սնվում էր ռուսական կրթամշակութային կյանքը նույնպես, արևելահայ մանկավարժներ Ի. Հարությունյանը, Պ. Շանշյանը, Ս. Մանդինյանը, Ս. քհն. Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Խորեն Նարպեն վերադառնում են հայրենիք՝ նախաձեռնելով գիտամանկավարժական լայնածավալ գործունեություն:

Եվրոպական մանկավարժական միտքը դեռևս XVII-XVIII դարերում ուրվագծել էր կրթության ու դաստիարակության սահմանները, նպատակներն ու խնդիրները: Կրթական քաղաքականությունն ուղղված էր առողջ հասարակություն ձևավորելու գործընթացին, որի երաշխիքը կրթված ու դաստիարակված մարդն էր: Նման հասարակություն ունենալու համար մարդկային հարաբերությունները պետք է կառուցվեն այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են ազնվությունը, անկեղծությունը, առաքինությունները, քաջությունն ու հարգանքը:

Մեզանում նման հարցեր սկսում են շոշափվել XIX դարի երկրորդ կեսին վերոնշյալ արևելահայ մանկավարժների շնորհիվ: Մանկավարժական ամսագրերում քննարկման առարկա էր դարձել կրթության ու դաստիարակության նպատակների տարանջատման խնդիրը: Կրթության շնորհիվ մարդը զարգանում է, միտքը մշակվում է, գիտություններ է սովորում, իսկ դաստիարակության միջոցով ձևավորվում են մարդկությանը պիտանի, առաքինի, բարոյական անդամներ [1, էջ 123-124]: Թերևս մանկավարժները եզրագծում էին կրթության ու դաստիարակության սահմանումները: Ս. Մանդինյանի կարծիքով դաստիարակության վերջնանպատակն է բարոյական բնավորություն զարգացնել [2, էջ 217]: Պ. Շանշյանը, անդրադառնալով նույն հարցին, համարում է, որ դաստիարակության բուն նպատակն է ուղղել երեխայի կամքը՝ համաձայն Աստծո կամքի [3, էջ 40]:

Արևելահայ մանկավարժները տարբերակում են դաստիարակության չորս ձև՝ ֆիզիկական, մտավոր, աշխատանքային ու բարոյական: Նման տարանջատումը գալիս է նախորդ դարաշրջաններից: Այդ

մոտեցումներն առկա են և՛ միջնադարյան, և՛ավելի ուշ շրջանի թե՛ հայ, թե՛ եվրոպացի մանկավարժ-փիլիսոփաների՝ Անանիա Շիրակացու, Գրիգոր Տաթևացու, Մխիթար Սեբաստացու, Յ. Ա. Կոմենսկու, Ջ. Լոկկի, Կ. Ա. Հելվեցիոսի, Դ. Դիդրոյի, Յ. Հ. Պեստալոցցեի և ուրիշների գործերում: Վերոնշյալ մանկավարժ-փիլիսոփաների մի խումբ (Անանիա Շիրակացի, Գրիգոր Տաթևացի, Մխիթար Սեբաստացի, Յ. Ա. Կոմենսկի) *բարոյական դաստիարակության* հիմք է ընդունում մարդու՝ Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու «բանաձևը»: Երկրորդ խումբը (Ջ. Լոկկ, Կ. Ա. Հելվեցիոս) կարևորում է *բարոյական դաստիարակությունը*, սակայն անորոշ է թե ինչպիսի հիմնարար «բանաձև» է ընդունում:

Կարևորելով դաստիարակության գործընթացում **Իդեալի** գաղափարը՝ քրիստոնեական բարոյագիտության վրա հիմնված դաստիարակությունը, որն առաջնորդվում է մարդու՝ Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու «բանաձևով», առաջարկում է կատարելության հստակ օրինակ: Ձգտելով նմանվել այդ օրինակին՝ մարդը սովորում է ազնիվ, արդար հարաբերություններ ստեղծել այլոց հետ, ուրիշներին չնախանձել, ձգտել մարդասեր մարդ դառնալ [4, էջ 9]:

Արևելահայ աշխարհիկ ու հոգևոր մանկավարժների շրջանակում քննարկվող «բանաձևը» ևս հավանության էր արժանացել: Պ. Շանշյանի կարծիքով կրթության հիմքը պետք է լինի այնպիսի գիտելիքների համակարգը, որն օգնում է մարդուն պահպանել իր արժանապատվությունը: Այդ համակարգում ընդգրկված են կրոնը, բարոյագիտությունն ու բնագիտությունը: Հեղինակի խոսքով մարդու կրթությունը անհրաժեշտ է սկսել կրոնից, քանի որ «վասն զի մարդն է յԱստուծոյ, Աստուծով և վասն Աստուծոյ» [3, էջ 23]: Բարոյագիտության միջոցով մարդը սովորում է ճանաչել իրեն ու մյուսներին: Սովորում է իր պարտավորությունները աստծո, մարդու, հայրենիքի, ժողովրդի, եկեղեցու հանդեպ [3, էջ 23]:

Ս. Մանդինյանը, Ի. Հարությունյանը, Ա. Բահաթրյանը, Խորեն Նարպեն, ներկայացնելով *կրոնաբարոյական դաստիարակության* կարևորությունը, նշում են, որ նախքան երեխաներին կրոնի մասին գիտելիքներ հաղորդելն անհրաժեշտ է հաշվի առնել նրանց տարիքը: Վերոնշյալ մանկավարժներից Ա. Բահաթրյանն այդ հարցի առթիվ գրում է, որ երեխայի սկզբնական տարիքում կրոնական զգացմունք ու բարոյական դատողություն արթնացնելու համար արդյունավետ է ժողովրդական հեքիաթներ ընթերցելը: Հեքիաթների նյութը պարզ է և հասանելի, դրանց միջոցով երեխան հաղորդակցվում է կենդանական ու բուսական աշխարհին, սովորում է ճիշտ ընկերական հարաբերություններ ստեղծել, հոգատար վերաբերմունք ունենալ իրեն շրջապատող աշխարհի հանդեպ [5, էջ 51-52]:

Ս. Մանդինյանն առաջարկում է դպրոցներում ունենալ հրահանգներ, որոնց միջոցով երեխաները ուրախության ու տխրության ժամանակ կսովորեն ապրումակցել միմյանց, եղբայրական սիրով կլցվեն միմյանց հանդեպ, կսովորեն արժևորել պատասխանատվությունն ու հավատարմությունը: Հեղինակը կարևորում է եկեղեցական տոներին նվիրված միջոցառումները: Անհրաժեշտ է երեխաներին պատմական տեղեկություններ հաղորդել այդ տոների մասին, մեկնաբանել դրանց խորհուրդը քրիստոնեական եկեղեցու համար [6, էջ 20]: Խոսելով մարդու՝ Աստծո հանդեպ ունեցած պարտավորությունների մասին՝ Ս. Մանդինյանը էական է համարում դպրոցներում մաղթանք կատարելը, ինչի առթիվ գրում է. «Որպէսզի մանկանց մէջ այն ճշմարտութիւնը խորը տպաւորուի, թէ ամենայն բան, նաև կեանքի մի երկար կամ կարճ բաժինը Աստուած կանչելով պէտք է սկսուի և վերջանայ. և նոցա խղճի մէջ արձագանք լսուի, թէ նոքա մի միութեան, մի ամբողջութեան հարազատ անդամներ են՝ ամէն շաբաթուայ կամ դպրոցական մի մեծ բաժնի սկզբին և վերջը աւելի երկար մաղթանք է կատարւում, ուր ամենայն վարժապետ և աշակերտ մասնակից է լինում» [6, էջ 20-21]:

Ըստ Ս. քին. Մանդինյանի՝ երեխան բարոյապես դաստիարակվում է տարբեր վայրերում՝ տանը, դպրոցում, զբոսանքի, խաղի ժամանակ: Հոգևորական մանկավարժը մեծ ուշադրություն է դարձնում երեխաների տարիքային առանձնահատկություններին՝ նշելով. «…Գտնել հաջողակ ժամանակ սորվեցնելու և մատղաշ միտքը բաց լինի ընդունելու իմաստութեան և առաքինութեան սերմօրենքը: Նման առաքինութիւնները հաստատուած են կրոնի հիման վրա, եթե կրոնը առաջուց չի առաջնորդել նրանց» [7, էջ 72]: Այն մասին, թե ինչ է անհրաժեշտ սովորեցնել երեխաներին, հեղինակը գրում է. «Երես խաչ հանելը. հանուն հոր և որդւոյ հոգւոյն սրբոյ: Տերունական աղոթքը, որ Քրիստոս սովորեցրեց իւր աշակերտացը: Սովորեցնել քրիստոնէական սկզբունքներ» [7, էջ 72]:

Արևելահայ մանկավարժներից Ի. Հարությունյանը, անդրադառնալով *կրոնաբարոյական դաստիարակության* խնդիրներին, նշում է, որ նման դաստիարակության հետևանք կլինի այն, որ երեխայի մոտ զարգանան բարոյական մտադրություններ: Առհասարակ հեղինակը դաստիարակության խնդիր է

համարում բարոյական անձ կրթելը: Ըստ հեղինակի՝ բարոյականությունն ընդունում է միևնույն ժամանակ նաև կրոնական կերպարանք, ուստի դաստիարակության նպատակը մանկան մեջ պետք է լինի ոչ միայն բարոյական, այլև կրոնական բարոյական բնավորություն զարգացնելը [8, էջ 338]:

Հոգևորական-մանկավարժ Խորեն Նարպեն բազմիցս անդրադարձել է դպրոցներում կրոնի ծրագրին: Խորեն Նարպեն, ինչպես որոշ մանկավարժներ, կարևորում է երեխայի տարիքին համարժեք կրոնական գիտելիքներ հաղորդելը: Նկատի ունենալով աստվածաշնչային պատմությունների բարոյական, կրթիչ կողմը՝ մանկավարժն առաջարկում է կազմել այնպիսի ուսումնական ծրագիր, որի վերջնարդյունքները կլինեն՝ ա) ծանոթանալ քրիստոնյայի կերպարին, բ) ճանաչել ծնողի, Աստծո հանդեպ իր պարտավորությունները, գ) հասկանալ սխալների հետևանքները, պատվիրանները պահելու կարևորությունը [9, էջ 240-25]:

Եզրակացություններ: Այսպիսով՝ մանկավարժները շարունակել են նախորդ դարաշրջանի ավանդույթները՝ տարանջատելով դաստիարակության չորս ձև՝ ֆիզիկական, մտավոր, աշխատանքային ու բարոյական: *Բարոյական դաստիարակության* համար հիմք են ընդունել քրիստոնեական բարոյագիտությունը: Նրանք կարևորել են երեխայի տարիքային առանձնահատկություններին համարժեք *կրոնաբարոյական դաստիարակությունը*, որի արդյունքում պետք է ձևավորվեր բարոյական բարձր զգացմունքներ ունեցող, քրիստոնյա անձը: Հետաքրքիր փաստ է, որ ինչպես հոգևորական, այնպես էլ աշխարհիկ մանկավարժների՝ կրոնաբարոյական դաստիարակության վերաբերյալ տեսակետները բխում են քրիստոնեական սկզբունքներից::

Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Հ., Դաստիարակութիւն և կրթութիւն, «Հայկական աշխարհ», 1875, N 8-9:
2. Մանդինեանց Ս., Համառօտ մանկավարժութիւն, Տփղիս, 1878:
3. Մելքիսեդեկ եպս. Մուրատեան, Պետրոս Շանշեանց, Թիֆլիս, 1898:
4. Հ. Պօղոս վ. Հովնանեանց, Ուսումն ազգային դաստիարակութեան որ է ազգային տղոց միտքը կամքն ու սիրտը կրթելու գիտութիւն առանձինն դաստիարակաց համար, Վիէննա, 1862:
5. Բահաթրեանց Ա., Ուղեցոյց հայ ուսուցչի, Թիֆլիս, 1882:
6. Մանդինեան Ս., Դպրոցական սահմանադրութիւն, Թիֆլիս, 1875:
7. Ս. քին. Մանդինեանց, Հայելի դաստիարակութեան տղայոց, Թիֆլիս, 1859:
8. Յարութիւնեանց Ի., Կրօնի ուսուցումն «Արարատ», Էջմիածին, 1889, N Զ:
9. Խորեն Նարպէ, Կրօնի դասատուութեան համակեդրոնական սիստէմ, «Մանկավարժանոց», Թիֆլիս, 1884, N 7-8:

Получено: 18.10.2022 *Received 18.10.2022*
Рассмотрено: 26.10.2022 *Reviewed 26.10.2022*
Принято: 04.11.2022 *Accepted 04.11.2022*

Journal ”Education in the 21st Century”, Vol1-8/2/, 2022

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License